

**Մաքսային միության անդամ պետությունների մաքսային
ծառայությունների միավորված կոլեգիա**

ՈՐՈՇՈՒՄ

11 հունիսի 2014 թվականի

թիվ 11/22

քաղ. երեւան

Փաստաթղթաշրջանառությունը կրճատելու մասին

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների
միավորված կոլեգիան

ՈՐՈՇԵՑ՝

1. Ընդհանուր առմամբ համաձայնել փուլ առ փուլ հրաժարվել մաքսային
հայտարարագրերը փոստային առաքանիներով առաքելուց եւ Մաքսային
միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանման
հաստատումն իրականացնել առավելագույն էլեկտրոնային եղանակով:

2. Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին, Ղազախստանի
Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ին եւ Ռուսաստանի ԴՄԾ-ին՝

2.1 ապահովել Մաքսային միության անդամ պետությունների մաքսային
մարմինների տվյալների բազաներում ընդգրկված տեղեկությունների
դիտանցման անցկացումը Մաքսային միության մաքսային տարածքից
ապրանքների փաստացի արտահանումը հաստատելու մասին էլեկտրոնային
ծանուցումների, ինչպես նաեւ Մաքսային միության մաքսային տարածքից
ապրանքների փաստացի արտահանումը հաստատելու մասին առանց «հայցման
տեխնոլոգիայի» օգտագործման ձեւակերպված ծանուցումների, կամ սխալ
տեղեկություններ պարունակող էլեկտրոնային ծանուցումների բացակայության

դեպքեր հայտնաբերելու մասով.

2.2 իրականացնել կանոնավոր կերպով (յուրաքանչյուր ամիս) սույն որոշման 2.1 կետում նշված այդ տեղեկությունների փոխանակում՝ նշված դեպքերի նվազեցմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու նպատակով:

3. Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին՝ (ՄՀԿՎ, Վ.Ն. Օրլովսկի), Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ին (ՀՄՎ, Կ. Ու. Մաուբաեւ) եւ Ռուսաստանի ԴՄԾ-ին (ՄՁեւՄՀԿԳՎ, Դ.Բ. Ժուկով)՝ մինչեւ 2014 թվականի օգոստոսի 20-ն ընկած ժամկետում փոխանակել անցակետերի ցանկերը (նշելով այդ կետերի անվանումները եւ ծածկագրերը), որտեղ կիրառվում է ավտոմատացված համակարգ, որը թույլ է տալիս հաստատել ապրանքների փաստացի արտահանումը Մաքսային միության մաքսային տարածքից, եւ անցկացնել դրանցում մաքսային հայտարարագրերը թղթային կրիչով առաքելուց հրաժարվելու փորձ 2014 թվականի սեպտեմբերի 1-ից մինչեւ նոյեմբերի 30-ը՝ պահպանելով այդ առաքման եղանակը միայն եթե՝

3.1. մեկնման վայրում գտնվող մաքսային մարմինը չունի տվյալների կենտրոնական բազաներից՝ ձեւակերպված մաքսային հայտարարագրերի վերաբերյալ, Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների տեղեկատվական համակարգ «հայցման տեխնոլոգիայի» օգտագործմամբ հայց ներկայացնելով, տեղեկություններ ստանալու հնարավորություն.

3.2. մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից ապրանքների փաստացի արտահանման վերաբերյալ էլեկտրոնային տեղեկությունների ճշգրտում է կատարվում.

3.3. մեկնման վայրում գտնվող՝ Բելառուսի կամ Ռուսաստանի մաքսային մարմին գրավոր տեսքով ներկայացվում է այն ապրանքների հայտարարագիրը, որոնց բացթողումն իրականացվել է Ղազախստանի մաքսային մարմնի կողմից:

4. Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին (ՄՀԿՎ, Վ.Ն. Օրլովսկի),

Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ին (ՀՄՎ, Կ. Ու. Մաուբաեւ) եւ Ռուսաստանի ԴՄԾ-ին (ՄՁեւՄՀԿԳՎ, Դ.Բ. Ժուկով)՝ զեկուցել փորձի արդյունքների մասին Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի տասներեքերորդ նիստի ժամանակ:

Նախագահի տեղակալ՝

Ա.Ֆ. Շախլեակի

Նախագահի տեղակալ՝

Գ.Կ. Ամրին

Ռուսաստանի Դաշնության ԴՄԾ-ի

ղեկավարի առաջին տեղակալ,

Միավորված կոլեգիայի անդամ՝

Վ. Մ. Մալինին